ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 21 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Իրինա Ավետիսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Իրինա Ավետիսյանը 02.02.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում հաստիքների կրճատման հիմքերը և պատճառները հստակ կերպով սահմանված չլինելը և դրա արդյունքում ձևավորված իրավակիրառական պրակտիկան, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 1-ին մասի հակասական իրավակիրառական պրակտիկան /հաստիքը կրճատելուց մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելու օրն ընկած ժամանակահատվածում աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխանող աշխատանքի

առկայության դեպքում աշխատողի խախտված իրավունքները մի դեպքում վերականգնելու, և, հաստիքը կրճատելուց մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելու օրն ընկած ժամանակահատվածում աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխանող աշխատանքի առկայության դեպքում աշխատողի խախտված իրավունքները այլ դեպքում չվերականգնելու հակասական պրակտիկան /միևնույն նորմերի այլ մեկնաբանությունը/ ճանաչել 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասին, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-2-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի, 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի և 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 28-29-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը գտնում է, որ աշխատանքից ազատվելու և աշխատանքում վերականգնվելու հիմքերն օրենքով հստակ կերպով սահմանված չլինելու և դրա հետևանքով ձևավորված հակասական իրավակիրառական պրակտիկայի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 1-ին մասի հակասական իրավակիրառական պրակտիկայի արդյունքում խախտվել են իր՝ աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքները: Ըստ դիմողի՝ արդյունքում առաջացել է կատարյալ անորոշություն՝ մի դեպքում աշխատանքից ազատելիս աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան աշխատանքի առկայությունը դատարանների կողմից դիտվում է հիմք աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար, իսկ մյուս դեպքում՝ նույն հանգամանքների առկայությունը՝ ոչ:

Դիմողի կարծիքով՝ իր գործերով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներն իրավակիրառողի կողմից տարբեր մեկնաբանությամբ կիրառվելու արդյունքում խախտվել է նաև օրենքի առջև բոլորի հավասար իրավունքը և իր հանդեպ դրսևորվել է խտրականություն:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունիսի 1-ի ՍԴՈ-891 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը և 113-րդ հոդվածի 3-րդ մասը: Նշված որոշման ընդունումից հետո՝ 2010թ. հուլիսի 15-ի ՀՕ-117-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը վերաշարադրվել է որպես 2-րդ կետ՝ առանց բովանդակային փոփոխությունների, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանվել է այլ կերպ՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով…, այսինքն՝ նոր իրավակարգավորմամբ ավելացվել է նաև խնդրո առարկա հոդվածի 1-ին մասի 4-րդ՝ «աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում» կետը:

Դիմողի կողմից առաջադրված հարցադրումներն առ այն, որ «… աշխատանքից ազատելիս աշխատողի մասնագիտական պատրաստվածությունը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան աշխատանքի առկայությունը դատարանների կողմից դիտվում է հիմք աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար, իսկ մյուս դեպքում՝ նույն հանգամանքների առկայությանը՝ ոչ…» վկայում են, որ նրա կողմից բարձրացված հարցերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իր դիրքորոշումները վերոնշյալ ՍԴՈ-891 որոշման մեջ: Հետևաբար, այս դրույթների մասով առկա է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ պետք է նշել, որ.

ա/ այդ դրույթի սահմանադրականությունը վիճարկելիս դիմողն այն չի առանձնացրել իր կողմից վիճարկվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի՝ խնդրո առարկա դրույթներից, ուստի ներկայացված հիմնավորումները պետք է դիտել հավասարապես վերաբերելի նաև այս դրույթին: Դիմողի առաջ քաշած փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ «…նույնական փաստական հանգամանքներով վերոնշյալ գործերով

իրավակիրառողի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 3-րդ մասի պահանջները կիրառվել են այլ մեկնաբանությամբ, իսկ դիմողիս պարագայում՝ հակառակ մեկնաբանությամբ...», այն պարագայում, երբ խնդրո առարկա դրույթը, ի թիվս այլնի, վերաբերում է աշխատանքային իրավահարաբերություններում հայցային վաղեմության ժամկետներին: Հետևաբար, դիմողը բավարար կերպով չի հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

Այսպես, անհատական դիմումին ներկայացվող պահանջներից է նաև այն, որ դիմողը պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

բ/ իր փաստարկները շարադրելիս դիմողը ներկայացրել է մի շարք դատական գործեր՝ արձանագրելով, որ «...իմ գործով ապացուցվել է, որ իմ մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխանող առկա են եղել մի շարք հաստիքներ, սակայն դրանք ինձ չեն առաջարկվել..., և նույն նույնական փաստական հանգամանքներով վերոնշյալ գործերով իրավակիրառողի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 3-րդ մասի, 265-րդ հոդվածի պահանջները կիրառվել են այլ մեկնաբանությամբ, իսկ դիմողի պարագայում՝ հակառակ մեկնաբանությամբ...»: Նշված փաստարկների վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը գտնում է, որ դիմողը բարձրացրել է իրավադրույթի կիրառման իրավաչափության հարց: ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը համապատասխան՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց,

ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Իրինա Ավետիսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

21 փետրվարի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-4